




ՔԱՂԴԷԱՑՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԷԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Յետ կարճատև հիւանդութեան 83 տարեկանին վախճանեցաւ Քաղդէացոց Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Պօղոս Բ. Շէյխօն, 31 տարիներու գահակալութենէ վերջ, ապրիլ 13 1989-ին:

Պետական ներկայացուցիչներու եւ այլ քրիստոնէայ յարանուանութեանց առաջնորդներու կողքին, յանուն Իրաքահայ թեմին, թաղմանական արարողութեան իր մասնակցութիւնը բերաւ համայնքիս բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Աւագ եպիսկոպոս Ասատուրեանը Պաղտատի հայոց եկեղեցիներու հոգեւոր հովիւներու հետ:

Քառասունքի առթիւ մատուցուած պատարագէն եւ հոգեհանգստեան սաշտօնէն վերջ քաղդէացոց Ս. Պետրոս վանքին մէջ մայիս 15 1989-ին կայացաւ նոյն եկեղեցոյ եպիսկոպոսաց սինոտի ժողովը՝ քննարկելու Քաղդէացոց եկեղեցոյ եւ Պատրիարքարանին յուզող հարցեր, ինչպէս նաեւ կատարելու պատրիարքական ընտրութիւն: Մայիս 21-ին Պատրիարք ընտրուեցաւ Լիբանանի Քաղդէացոց եկեղեցոյ առաջնորդ Ռաֆայէլ Պիտաուիտ արքեպիսկոպոսը:

Ի շարս պատրիարքական կեդրոններու, ընտրութեան արդիւնքը հաղորդուեցաւ նաեւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ի Ս. Էջմիածին: Մայր Աթոռէն ստացուած հեռագրի համաձայն, յանուն մեր մայրենի եկեղեցոյ, նորընտիր Պատրիարքի գահակալութեան արարողութեան եւ այլ հանդիսութեանց իր մասնակցութիւնը բերաւ թեմիս առաջնորդ Սրբազան Հայրը, որպէս ներկայացուցիչը Հայոց Հայրապետին:

ԱԻԱԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Հայոց եկեղեցի
Պաղտատ, Իրաք

Քաղդէացոց եկեղեցոյ նորընտիր Պատրիարքի գահակալութիւնը պիտի կատարուի այսօր մայիս 26 1989-ին Պաղտատի մէջ: Զերդ սրբազնու-

թիւնը կը նշանակենք անձնապէս ներկայացնելու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մասնակցելով գահակալութեան հանդիսութեանց եւ նորընտիր Պատրիարքին փոխանցելու Մեր ողջոյնները եւ եղբայրական սիրոյ զգացումները:

Օրհնութեամբ՝

ՎԱԶԳԷՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Իր հերթին նորընտիր Պատրիարքը Ամենայն Հայոց Կաթողիկոսէն ստացաւ հետեւեալ շնորհատրական հեռագիրը.

**ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՌԱՖԱՅԷԼ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԲԱԲԵԼՈՆԻ ՔԱՂԴԵԱՑՈՑ ՎՐԱՅ**

Պաղտատ, Իրաք

Միտագին ուրախութեամբ կը նշանակենք Աւագ եպիսկոպոս Ասատուրեանը իբրեւ ներկայացուցիչը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ մասնակցելու Ձեր գահակալութեան հանդիսութեանց որպէս նորընտիր Պատրիարք Քաղդեացոց Եկեղեցւոյ: Ձերմեռանդութեամբ կ'աղօթենք, որ Ս. Հոգին Ձեզի շնորհէ իմաստութիւն եւ կորով՝ առաջնորդելու Քաղդեացոց պատմական Եկեղեցին դէպի նոր հոգեւոր բարձունքներ: Կ'աղօթենք նաեւ, որ Ամենակալն Աստուած օրհնէ Ձեր Եկեղեցին եւ հաւատացեալ ժողովուրդը այս ուրախ առթիւ եւ յաջողեցնէ իրենց սուրբ առաքելութեան մէջ:

Եղբայրական սիրով կը մասնակցինք Ձեր աղօթքին եւ կը մնանք Ձեր եղբայրը ի Քրիստոս՝

ՎԱԶԳԷՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Յանուն Հայոց Հայրապետին, Առաջնորդարանս Նորին Ամենապատուութիւն Ռաֆայէլ Ա Պիտաուիտ Պատրիարքին կը ներկայացնէ իր սրբազան շնորհատրանքը եւ կը մաղթէ քաջառողջ կենաց տարիներ լի բեղուն եւ եկեղեցաշէն գործունէութեամբ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԻՐԱԷԻ

Ծանօթութիւն.

Քաղդեացոց Եկեղեցւոյ նորընտիր Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Ռաֆայէլ Ա Պիտաուիտը ծնած է 1922-ին Իրաքի հիւսիսային շրջանի Մուսուլ քաղաքին մէջ: 1933-ին ընդունուեցաւ Ս. Սիմօն Պետրոս դպրեւանքին մէջ եւ 1936-ին ուղարկուեցաւ Հոռս քարձրագոյն ուսման հետեւելու նպատակաւ: Կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ 1944-ին եւ յաջորդ տարին ստացաւ դոկտորական աստիճան: Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ 1957-ին եւ 1966-ին նշանակուեցաւ Առաջնորդ Լիբանանի Քաղ-

դեացոց Եկեղեցւոյ: Պատրիարք ընտրուեցաւ 21 մայիս 1989-ին: Սրբազան Պատրիարքը հեղինակած է գրքեր եւ յօդուածներ:

* * *

Քաղդեացոց Եկեղեցին ինքզինք կը կոչէ նաեւ Արեւելքի Եկեղեցի, եւ իր հիմնադիրը կը նկատի Տիրոջ աշակերտներէն Թովմաս Առաքեալը, որուն քարոզութեամբ քրիստոնէութիւնը տարածուեցաւ Միջագետքի, Պարսկաստանի եւ Հնդկաստանի մէջ:

Քրիստոնէութեան առաջին դարերուն, թէեւ հալածուած Բիւզանդական կայսրութեան կողմէ, այնուամենայնիւ նեստորական շարժումը շատ մը համակիրներ ունենալով յատկապէս տարածուեցաւ Պարսկաստանի, Միջագետքի եւ Արաբական թերակղզիի մէջ: Գրեթէ բոլոր Ասորեստանցիները նեստորական աղանդին պատկանեցան:

Վատիկանի որդեգրած միաբարական շարժման հետեւանքով, տասնվեցերորդ դարու կէսերուն երկպառակութիւն ստեղծուեցաւ նեստորական եկեղեցւոյ ծոցին մէջ: Անհամաձայնութեան տուն տուող պատճառներէն մին եղաւ նեստորական Եկեղեցւոյ Պատրիարքական Աթոռը ժառանգաբար նոյն ընտանիքին մէջ պահելու աւանդութիւնը, ինչպէս նաեւ տակաւին պատանի հասակին Պատրիարք նշանակելու սովորութիւնը: Վերոյիշեալ պատճառներու բերումով բաժանեալ նեստորականներ, 350 հոգինոց պատուիրակութեամբ մը, ճամբորդեցին մինչեւ Երուսաղէմ եւ ս. քաղաքի Ֆրանչիսկյան Միաբանութեան Աբբահօր միջոցաւ խնդրանք ներկայացուցին Հռոմի Պապին իրենց ճանաչում տալու որպէս Հռոմի հպատակ Պատրիարքական Աթոռ: Ընթացք տալով կատարուած դիմումին, Օժէն Դ Պապը 1545-ին Նեստորականներէ բաժնուած ստուար խումբի գահակալին տուաւ «Բաբելոնի Պատրիարք Քաղդեացոց վրայ» տիտղոսը. իսկ 1552-ին Յովնոս Պապի օրով այս Եկեղեցին պաշտօնապէս կապուեցաւ Հռոմի հետ որպէս Քաղդեացոց Եկեղեցի:

Երկար ժամանակ Պատրիարքական Աթոռի կեդրոնը եղած է Իրաքի հիւսիսային շրջանը, սակայն սոյն դարու կէսերուն Աթոռը փոխադրուեցաւ Պաղտատ: Այսօր Քաղդեացոց Եկեղեցիին կը պատկանին անելի քան կէս միլիոն հաւատացեալներ: Իրաքի մէջ ունին ութը առաջնորդութիւններ, երեքը ի Պարսկաստան եւ մէկական թեմեր Սիրիոյ, Լիբանանի, Եգիպտոսի, Թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներու մէջ:

